ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-20-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Բելգիայի Թագավորություն՝ Բրյուսել/2019 թվականի փետրվարի 18-20-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ԵՄ Եվրոպական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Հայկական ատոմային էլեկտրակայան»-ին տրամադրվող միջազգային աջակցության համակարգմանն ուղղված 8-րդ տեխնիկական հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկում է եղել ՀԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների կառավարման նոր համակարգի կառուցմանը հնարավոր աջակցություն տրամադրելու վերաբերյալ:
   Քննարկվել են համագործակցության և աջակցության հնարավոր ոլորտները:
   Բաց քննարկում է եղել միջուկային անվտանգության տարբեր ոլորտներում հնարավոր աջակցության հեռանկարների մասին:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Ներկայացրել եմ ՀԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների կառավարման նոր համակարգի կառուցմանը տրամադրվող աջակցության անհրաժեշտությունը և խնդրել եմ տրամադրել աջակցություն:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների կառավարման նոր համակարգի կառուցման աջակցության առաջնահերթությունները և աջակցության չափի վերաբերյալ կանխատեսումները երկու շաբաթվա ընթացքում ՀԱԷԿ-ի կողմից ԵՄ աշխատանքային խմբին գրավոր կերպով մանրամասն կերպով ներկայացնելու վերաբերյալ:
   Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Որպես այս հանդիպման արդյունք՝ ակնկալվում է ՀԱԷԿ-ի ռադիոակտիվ թափոնների կառավարման նոր համակարգի կառուցման աջակցության ծրագրին մինչև 10մլն դոլարի դրամաշնորհ հատկացնել կամ աջակցության այլ ծրագրեր տրամադրել:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

24 փետրվարի 2020թ.